Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(15 ապրիլի 2007 թ.)

«Հոգի Տեառն ի վերա Իմ, վասն որոյ եւ օծ իսկ Զիս. ավետարանել աղքատաց առաքեաց Զիս»:

«Աստուծո Հոգին Իմ վրա է, դրա համար իսկ օծեց Ինձ, Ինձ ուղարկեց աղքատներին ավետարանելու»:

(Ղուկ. Դ 18)

Սիրելի նորաօծ քահանա Հայրեր,

Այսօր Տիրոջ Հոգին առատորեն կիջնե ձեր կյանքի վրա, ձեր հոգիները, ձեր միտքը, սիրտը և ամբողջ էությունը կլեցվին Աստուծո ներկայությամբը, և դուք կկերպարնափոխվիք, որպես ծառա Հիսուսի Քրիստոսի ձեր կյանքը այսուհետև շարունակելու համար, որպես հովիվ բանավոր հոտին Աստուծո կողմեն ձեզի վստահված պարտականությունները լի ու լի կատարելու համար, դառնալու համար խոնարհ, հավատարիմ սպասավոր մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի, և հավատարիմ ծառայող Հայաստանյաց Առաքելական մեր մայր Սուրբ Եկեղեցվո:

Այսօր մանավանդ այս Սուրբ Խորանի վրա դուք հրավեր և կոչում կստանաք՝ ձեզ զգալու այնպես, ինչպես Քրիստոսի հետ Հակոբոս, Հովհաննես և Պետրոս: Երեք առաքյալները, Թաբոր լեռը բարձրանալով, այնուհետև իրենց հոգու մեջ զգացին, իրենց հոգու մեջ մնայունորեն արձագանքեց Պետրոսի ձայնը, երբ ըսավ՝ Տեր, բարվոք է մեզ աստ լինել: Այսուհետև դուք Աստուծո անդաստանի մեջ ծառայության եք կանչված: Տարիներ շարունակ ձեր հոգին, սիրտը, միտքը, էությունը սնուցանելով, լեցնելով մեր հայրերու հավատքի կյանքով, Ավետարանեն ճառագայթող Քրիստոսի պատգամներով, դուք աճեցաք, զարգացաք, ձեր մեջ սակավ առ սակավ խմորվեցավ քրիստոնյան, քահանան, հոգևորականը, ճշմարիտ հովիվը, որպեսզի այս պահեն սկսած դուք դառնաք ձեր կյանքով, նվիրյալ ձեր կյանքով հոգևոր մխիթարություն մեր Սուրբ Եկեղեցվո զավակներուն համար, ձեր կյանքը դառնա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կանթեղի մեջ նոր ձեթ, որպեսզի նոր լույս, ուրախություն, նոր խնդություն, հավատքի նոր երանգ, հավատքի նոր օգնականություն և զորություն դուք կարողանաք հաղորդել մեր ժողովրդի զավակներուն:

Այս տոնական առիթով, սիրելի նոր ձեռնադրյալ և նորաօծ քահանա Հայրեր, մենք ձեզ կշնորհավորենք, կաղոթենք առ բարին Աստված, որ ինչպես Քրիստոսի հոգու մեջեն ճառագայթեց այսօրվա Ավետարանի մեջ կարդացված այն հատվածը,

ուր կըսվե, թե երբ Քրիստոս Աստվածորդին կըսեր. «Տիրոջ Հոգին Իմ վրա է, որով և օծեցիր զԻս, որպեսզի կյանքը դարձնեմ աղքատներու համար Ավետարանի քարոզչություն», դուք այդպիսի առաքելական կյանքով ներշնչված մեր ժողովրդի զավակներու հոգու մեջ արմատավորեք Քրիստոսի սերը, հույսը, լույսը, որոնք հիմքն են նաև յուրաքանչյուր հավատավոր կյանքի մեջ:

Մենք այս տոնական առիթով ձեզ շնորհավորելով այսօր սրտի պարտք կզգանք մասնավոր կերպով շնորհավորելու և մեր երախտագիտական զգացումները արտահայտելու և փոխանցելու ազգիս Վեհափառ Հայրապետ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որուն սիրո և զուրգուրանքի և օրհնության ներքո ահավասիկ նոր սերունդ մը ևս կբացվի կյանքին, նոր սերունդ մը ևս, որոնք իրենց սրտի և հոգիի մեջ խոստում և ուխտ կկատարեն, որպեսզի Վեհափառ Հայրապետի օրհնությամբ անոնք դառնան մշակ առանց ամոթո Քրիստոսի բանավոր հոտին:

Մեր աղոթքն է առ բարին Աստված, սիրելի Վեհափառ, որ Ձեր Հայրապետական մականի ներքո սերունդներ, սերունդներ այս սրբազան և նվիրական օջախին մեջ այլակերպվին, պայծառակերպվին Քրիստոսի սիրով, Սուրբ Էջմիածնի խորհուրդով և իրենց կյանքովը դառնան նոր ներշնչում մեր ժողովրդի զավակներուն համար: Ձեր արտոնությամբ, սիրելի Վեհափառ Հայրապետ, մենք կուզենք նաև այսօր մեր բարի մաղթանքները և աղոթքը բարձրացնել նորաօծ և նոր ձեռնադրյալ քահանա Հայրերու ծնողներու և դաստիարակներու համար, որոնք տարիներ շարունակ իրենց ծնողական սիրո խնամքի ներքո տվեցին այն, ինչ որ իրենք ունեին իրենց սրտի մեջ և իրենց հետ միասին դաստիարակներ և որ սնունդ բաշխեցին մեր նորաօծ քահանա Հայրերուն, որպեսզի իրենք Քրիստոսանման կյանքով հավատարիմ ծառայությամբ իրենց կյանքը ընծայաբերեն Աստուծո Սուրբ Սեղանին:

Սիրելի նորաօծ և նոր ձեռնադրյալ քահանա Հայրեր, այսօրվանեն ամեն օր և ամեն ժամ և ամեն վայրկյան ձեր հոգու մեջ թող արձագանք դառնա, պատգամ դառնա Քրիստոսի աղոթքը՝ Տիրոջ Հոգին Իմ վրա է, որով և օծեցիր զիս, ահավասիկ կկանչվիմ ավետարանելու, քարոզելու աղքատներուն լույսի Ավետարանը, հույսի Ավետարանը այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանսդ. Ամէն»: